բայ դնելով։ Հակառակ իւր համեստութեան, երևում է ոչ համբակ, այլ արդէն «բաքի» (բաբունի), այսինքն վարդապետ-ուսուցիչ եւ գրչութեան մէջ ընտիր եւ անսխալ, որ իւր ուսումն ստացել է հէնց Եսայի Նչեցու մօտ։ Ցիչատակարանի չարադրութիւնը մաքուր և



Պատկեր 203.

լաւ գրաբարով, հրահանգուած մտքի արդիւնք, իսկ գրչութիւնը գեղեցիկ (Ցաւել. Բ. 75, պատկ. 204)(*)։

Մկրտիչ Թեղենեցու յիշատակարանի մէջ յիշուած երկու գրիչները՝ Յովհաննէս «ի հռչակաւոր քաղաքէն Եղնկայ կոչեցեալ», և «այլ ոմն Վարդան անուն ի նահանկեն Կիլիկիոյ», երկուսն էլ առաջնակարգ գրիչներ են, մանաւանդ առաջինը, որի գործերին կը ծանօթանանք, և որին չպէտք է չփոթել նոյնանուն եւ նոյն քաղաքացի նշանաւոր մատենագրի հետ։ Յովհաննէս գրիչ Երզնկայեցին Կիրակոս Երզնկացու եղբօր որդին էր. սա է գրել մինչև ԻԱ. տետրակի վերջը 329ա։ Այնուհետեւ շարունակել է Վարդան Կիլիկեցին ԻԲ.–ԻԹ. տետրակի կէսը 441. ԻԲ. տետրակի ա երեսի լուսանցքում կարմրագեղով նշանակուած է. «ասեցեալ ի վերայ Վարդանա Կիլիկեցոյս է գիր»։ Մնացածը գրել է Մկրտիչ Թեղենեցին։

Վարդան Կիլիկեցին գրել է եւ մի ուրիշ ձեռագիր. Նիւսացու լինն երանութեանց եւ Հայր մերի մեկնութիւնները. յիշատակարանը ոտանաւորով է և իւր ուսուցչի անուան յիշատակութեամբ. Acr. Վարդան։

Յորմէ յան. այն սոսկալի
Հատուցանէ զգործս բարի
Եսայիաս վարժապետի
Զիմանալի հաց ծառկողիս.
Ի Վարդանա աշակերտի...

Նորա ընտիր գրչութեան մասին գաղափար է տալիս պատկ. 205 (Ցաւել. Բ. 76)(*)։

Լամբրոնացու Երկոտասան մարգարէից վերլուծութիւնը գրուած է ՉԾԲ (= 1303) թուին «հրամանաւ վերասացեալ առնն ՅՍ Եսա. բաբունապետի ի խնդրոյ Յոհաննէս վարդապետի և ձեռամբ Թադէոսի անարհեստ գրչի», «ի գաւառիս Արարատեան ի վանքս որ կոչի Նոնաւանից, ընդ հովանեաւ Սբ. Աստուածնիս»(**)։ Գրիչը գանգատւում է, որ դառը և դժնդակ ժամանակ է գրում, ձմեռ եղանակին տառապելով երբեմն ցրտից, «երբեմն ի թաթարի գալ ու գնալոյ, ի տեղ-

(*) Ձեռ. Լ.Ջմ. 1844նժ. բերուած է Երեւանի կաթուղիկէ եկեղեցուց և մի մեծ հատոր է, կաշէկազմ, օսլայած թուղթ և բոլոր մասերն էլ ընտիր գրչութեամբ. թերթի մեծութիւնն է 20×15½ սմ., վերևի լուսանցքը 2/3 մասով կտրուած. բուն գիրը 17,4×12 սմ., տարաբաղդաբար վատ պահուած և տեղ տեղ թղթերը միացած։ Բովանդակութիւնն է ա) Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնը. բ) հեղինակի կենսագրականը «Ընդ Նուաղել թագաւորութեան. . . ». գ) Լեւոն թագաւորի յիշատակարանը՝ մի օրինակ Հաղբատի վանքին նուիրելու առթիւ. դ) գրչի յիշատակարանը պատմական-մատենագրական արժէքով. ե) «Ներբողեան պատմագրաբար ասացեալ սրբոյն Գրիգոր Աշխարհաբեր Երջանիկ վղպետի եւ առ քս. միայնացելոյ, ի վարս եւ ի հգնութիւն. մեծ քահանայապետին սրբոյն Ներսէսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոց ի խնդրոյ Նորին համանուն եւ համազգեայ Ներսէսի եպիսկոպոսի եւ սրբազանանուն քահանայի». սկս. «Բազում զգուշութեամբ. . . ». զ) բան յիշատակի մատենիս (Ցաւել. Բ. 75)։

(*) Ձեռ. Լ.Ջմ. № 652/749, 109բ. փոքրաչափ, թուղթ, բոլորգիր։

(**) Ձեռ. Լ.Ջմ. № 3606. կաշէկազմ 16×16½×6½ սմ., թուղթ. բովանդակութիւնը 1-274ա. Լամբրոնացու Երկոտասան մարգարէից վերլուծութիւն. իսկ 276ա – 330ա. Վարդանի Դանիէլի մեկնութիւնը։ Յիշատակարաններ 70բ. 100բ. 122ա. 185ա. 148ա. 156ա. 258ա., մեծ յիշատակարանը 273ա – 274ա։ Մխիթարի յիշատակարանը 330ա.։ Մի հատուած գլխաւոր յիշատակարանից 273ա. տես Թոփճեանի Ցուց. Խաչիկ Վ.ի Ձեռագրաց Բ. 45. Թ. 28։ Այս ձեռագիրը Գանձասարից է Էջմիածին բերուած։